# ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

### ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔՈՒՅԹՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 1-ին, չորեքշաբթի օրը, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում զեկուցումով հանդես է գալիս Տ. Հակոբ քահանա Գյուլյանը՝ ներկայացնելով Հոգու անմահության գաղափարը ըստ Պլատոնի, հենվելով հիմնականում Պլատոնի «Հոգին անմահ» աշխատության վրա:

* * *

Փետրվարի 8-ին, չորեքշաբթի օրը, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հաջորդ հավաքույթը: Տ. Շնորհք աբեղայի փետրվարի 5-ին Մայր տաճարում խոսած քարոզի քննարկումից հետո Տ. Եղիշե քահանա Սարգսյանը ներկայացնում է պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Աբրահամյանի՝ վերջերս Երևանի պետական համալսարանի հրատարակչության կողմից լույս ընծայված «Գլաձորի համալսարան» ուսումնասիրությունը և նշում այն հսկայական դերի ու նշանակության մասին, որ ունեցել է Գլաձորի համալսարանը հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ:

* * *

Փետրվարի 15-ին, չորեքշաբթի օրը, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցած միաբանական հերթական հավաքույթին, կրկին ներկա է Մայր Աթոռի միաբանական ողջ կազմը:

Հավաքույթի ընթացքում բանախոսությամբ հանդես է գալիս Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը՝ ներկայացնելով հայրաբանական գրականության անդրանիկ և արժեքավոր նմուշներից մեկը, որը մեզ է հասել «Թուղթ առ Դիոգնետոս» վերնագրով: Զեկուցողը նշում է, որ վերոհիշյալ թուղթը ջատագովական բնույթի մի աշխատություն է, որը գրվել է հավանաբար Բ դարում: Հեղինակն անհայտ է:

Զեկուցման վերջում սրբազան հայրը պատասխանում է ներկաների կողմից զեկուցման շուրջ տրված մի շարք հարցերի:

* * *

Փետրվարի 29-ին, չորեքշաբթի օրը, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցած միաբանական հերթական հավաքույթի ընթացքում, նախ քննարկվում է Մայր Աթոռի միաբան Տ. Հովհան արղ. Տերտերյանի՝ փետրվարի 26-ին, կիրակի օրը, Մայր տաճարի խորանից արտասանած քարոզը: Այնուհետև ներկայաց-

վում է վերջերս հրատարակված Զոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» (գիրք Բ) ուսումնասիրությունը: Ներկաները այն ընդհանուր կարծիքն են հայտնում, որ հեղինակը անժխտելի փաստերով կարողացել է վեր հանել Երիտթուրքերի հակահայկական վայրագ քաղաքականությունը: Նա օգտագործել է բազմաթիվ աղբյուրներ, կատարել կարևոր մեջբերումներ՝ քաղված ոչ միայն հայկական, այլև եվրոպական և նույնիսկ թուրքական թերթերից, վավերագրերից ու փաստաթղթերից:

## ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԸ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

Այս տարի, փետրվարի 20—23 օրերին, հոգևոր ճեմարանի ուսանողները, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վարդապետի ղեկավարությամբ, մեկնեցին Ծաղկաձոր՝ այցելելու տեղի պատմական հուշարձանները և անցկացնելու իրենց չորսօրյա ձեռային հանգիստը:

Առաջին օրն իսկ հոգևոր ճեմարանի ուսանողներն այցելեցին Կեչառիսի պատմական եկեղեցին և սքանչացած հայ ճարտարապետության այդ եզակի կառույցով:

Կեչառիսի վանքային համալիրի հիմնադիրն է եղել Գրիգոր Մագիստրոսը, որը 1003 թ. կառուցել է «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցին: Կեչառիսի վանքը ԺԲ—ԺԴ դարերում հանդիսացել է հայ մշակույթի զարգացման կարևորագույն օջախներից մեկը: Այստեղ են ապրել և ստեղծագործել միջնադարյան շատ մատենագիրներ և եկեղեցական գործիչներ, ինչպես՝ Խաչատուր վարդապետ Կեչառեցին, ճարտարապետ Վեցիկը և շատ ու շատ ուրիշներ:

Ճեմարանի ուսանողներն այցելեցին նաև Վեցիկ ճարտարապետի գերեզմանը: Միջնադարյան այդ նշանավոր ճարտարապետը կառուցել է Կեչառիսի փառահեղ կաթողիկե եկեղեցին: Նրա շիրիմի շուրջ խմբված՝ հոգևոր ճեմարանի ուսանողները երգեցին Կոմիտաս վարդապետի «Հայր մեր»-ը, «Տէր, ողորմեա»-ն և այլ հոգևոր երգեր: Մեծանուն ճարտարապետի գերեզմանին ճեմարանի փոխտեսուչ հայր Հայկազունը արտասանեց «Հոգւոցն հանգուցելոց» աղոթքը:

Հոգևորդ օրն ուսանողները ճոպանուղիով բարձրացան հանդիպակաց լեռան գագաթը, որտեղից նրանց առջև բացվեց մի գեղեցիկ համայնապատկեր. առջևում երևում էր ձյունաճերմակ Արարատը՝ մխրճված ամպերի մեջ:

Ծաղկաձորում գտնվելու օրերին ճեմարանի ուսանողները հնարավորություն ունեցան նաև կբաղվելու դահուկային սպորտով:

Ներշնչված հայրենի բնության ձմեռային տեսարանների զգլխիչ գեղեցկությամբ և վերանորոգված թարմ ուժերով՝ նրանք լավագույն տպավորություններով փետրվարի 23-ին վերադարձան Մայր Աթոռ:

## ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՎԻՐՎԱԾ Պ. ՍԵՎԱԿԻ 60-ԱՄՅԱԿԻՆ

Այս տարի Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ հոգևոր ճեմարանում ստեղծվել է գրական խմբակ, որի նպատակն է լինելու ճեմարանի ուսանողների ուժերով այարբերաբար ներկայացնել հայ գրողներից որևէ մեկի կյանքն ու գործունեությունը: Խմբակի գործունեությունը էլ ավելի կնպաստի ուսանողների մեջ սեր և հետաքրքրություն արթնացնելու մեր ազգային գրականության նկատմամբ:

Անդրանիկ գրական-երաժշտական երեկոն տեղի ունեցավ սույն թվականի փետրվարի 4-ին: Այն նվիրված էր Պարույր Սևակի ծննդյան 60-րդ տարեդարձին:

Երեկոյին նախագահում էր Վեհափառ Հայրապետը: Ներկա էին նաև մայրավանքի ողջ միաբանությունը և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

Բացման խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի հայոց լեզվի դասախոս պարոն Բաբկեն Ներսիսյանը: Այնուհետև Ե լսարանի ուսանող Հակոբ սրկ. Մարտիրոսյանը համառոտ գծերի մեջ ներկայացրեց Պ. Սևակի կյանքն ու գրական գործունեությունը:

Երեկոյի ընթացքում Պ. Սևակի բանաստեղծությունների արտասանություններով հանդես եկան ճեմարանի մի խումբ ուսանողներ: Նրանց կատարմամբ հնչեցին նաև Կոմիտասի «Գարուն ա, ձուն ա արել», «Լո, լո», «Չինար ես» և այլ երգեր:

Գրական-երաժշտական երեկոյի վերջում իր օրհնության խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը՝ քաջալերելով ուսանողներին և մաղթելով, որ ճեմարանի հարկից ներս ավելի հաճախակի կատարվեն նման միջոցառումներ: